



246

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 23869

Փետրուար 8, 1973

Արժանաշնորհ
Տ. Առնակ Զհնյ. Գասպարեան
Հովիւ Ս. Խովմաս Եկեղեցւոյ
Նահագան ծիական Խորհուրդի
Խենեֆլայ, Նիւ Ճորճի.

Սիրելի Տէր Առնակ,

Ստացած ենք 1973 Փետրուար 5 թուակիր 2եր թեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Փետրուար 4ին գումարուած 2եր ծիական փողովին մէջ կատարուած է ծիական Խորհուրդի եօթը անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծիական փողովը տեղի ունեցած է Խեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծիական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեան ցատեանապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Փիթըր Սէյսըն
Լեւոն Նիկողոսեան
Արա Ճիլաճեան
Մասիս Բարսեղեան
Շղուարդ Քէֆեան
Ֆրանք Աւագեան-Սթօնսըն
Սուպար Գազարեան (մէկ տարուան համար)